42

«Հաստատում եմ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
պարտականությունները կատարող,
ոստիկանության փոխգնդապետ
_____ Մ.Մարկոսյան
«22» _____ 2021թ.

# ԿԱՐԾԻՔ

**առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Սևակ Արթուրի Պողոսյանի՝ «Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները» թեմայով ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Թ.Գրիգորյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Մ.Մարկոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Մ.Խաչատրյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ.Ա.Թումասյանի, քննարկեց Սևակ Արթուրի Պողոսյանի՝ «Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Հանցակցությունը և հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները հանդիսանում են քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի առավել վիճելի հիմնախնդիրներից, որոնց առնչությամբ բազմաթիվ մոտեցումներ և միտումներ փոփոխվել են վերջին տասնամյակի ընթացքում: Պատահական չէ, որ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ տասնյակից ավել դատական գործերով (մասնավրապես՝ ԵԱԴԴ/0051/01/17, ԵԷԴ/0125/01/09, ԳԴ5/0005/01/14,

ԵՇԴ0002/01/11 և այլն) անդրադարձել է այդ հարցին՝ ներկայացնելով քրեական օրենքի միատեսակ կիրառելիությունն ու մեկնաբանությունը: Հանցակցության տարբեր հարցերին անդրադարձ է կատարվել նաև հայրենական գիտության մեջ, օրինակ՝ 2019թ.-ին Լ. Գրիգորյանի, 2017թ.-ին Ա. Ռաշիդյանի, 2010թ.-ին Լ. Թադևոսյանի, 2004թ.-ին Ս. Ավետիսյանի և այլ հեղինակների աշխատությունում: Փաստացի ՀՀ-ում առկա է ծավալուն թե՛ տեսական, թե՛ դատական բազա՝ հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկություններին անդրադառնալու համար:

Հարցն առավել արդիականանում է հաշվի առնելով, որ 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունվել է ՀՀ նոր քրեական օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտնելու 2022թ.-ի հուլիսի 1-ից և սահմանում է քննարկվող ինստիտուտի առնչությամբ նոր մոտեցումներ ու կարգավորումներ:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ է լուծել հետազոտության նպատակը՝ հանցակցության ինստիտուտի խոր ուսումնասիրությունը, դրանում առկա հակասությունների, անկատարությունների և թերությունների բացահայտումը, ինչպես նաև հետազոտության խնդիրները:

Հետազոտությունը սկսվում է հանցակցության հատկանիշները, հանցակիցների տեսակները, դրանց օրենսդրական բնորոշման և պատասխանատվության առանձնահատկությունները՝ հատուկ շեշտադրելով հանցակցության հասկացությունն ու հատկանիշները, ինչպես նաև հանցագործության կատարողի, կազմակերպչի, դրդչի և օժանդակողի հասկացությունները և հարակից հարցերը:

Ատենախոսության երկրորդ գլխում հանգամանորեն ներկայացվում է հանցակցության ձևերը՝ հատուկ շեշտադրելով հանցագործությունների որակումը հանցակցության տարբեր ձևերի դեպքում:

Ատենախոսության երրորդ գլուխում վերլուծվում է հանցակիցների քրեական պատասխանատվությունը հատուկ դեպքերում, մասնավորապես՝ չհաջողված հանցակցության, հանցակցի սահմանազանցման, հանցագործությունից հանցակիցների կամովին հրաժարվելու, շարունակվող հանցագործության, հատուկ սուբյեկտով հանցագործություններում հանցակցության դեպքերում:

Եզրակացության մեջ ատենախոսն ամփոփում է կատարված հետազոտության արդյունքները, մատնանշում ատենախոսության առավել նշանակալի եզրակացությունները:

Միանշանակ դրական գնահատականի են արժանի ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթները, սակայն դրանց առնչությամբ ներկայացվող լուծումներն ու համապատասխան առաջարկությունները:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրան:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Վիճակագրական տվյալները սահմանափակվում են 2014, 2016 և 2018 թվականներով, և անհասկանալի է նման ընտրանքի կիրառումը: Առավել ցանկալի կլիներ,եթե ներկայացվեին 2014-2020 թվականների վիճակագրական տվյալները:

2. Հաշվի առնելով, որ 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունվել է ՀՀ նոր քրեական օրենսգիրքը, ցանկալի կլիներ, որ հեղինակը համակարգված համեմատություն իրականացներ գործող և նոր քրեական օրենսգրքերի միջև, այլ ոչ թե դրվագային անդրադարձ կատարեր՝ լոկ համաձայնվելով կամ չհամաձայնվելով որոշ իրավակարգավորումներին (ատենախոսության մեջ հեղինակը ՀՀ նոր քրեական օրենսգրքին անդրադարձել է 26-րդ, 36-րդ, 56-րդ, 62-րդ և այլ էջերում):

3. Համակատարումը ներկայացնելիս ցանկալի կլիներ առավել մանրամասն ու համակարգված ներկայացնել համակատարման առանձնահատկություններն օբյեկտիվ կողմի կառուցվածքի առանձնահատկություններից ելնելով, օրինակ՝ երկընտրելի կամ բարդեցված օբյեկտիվ կողմի դեպքում:

4. Օժանդակողի հասկացությունը մեկնաբանելիս և համապատասխան առաջարկ ներկայցնելիս՝ հեղինակը չի անդրադարձել ՀՀ նոր քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածի 7-րդ մասում նշված կետերին, որոնք ոչ միայն նորամուծություն են, այլ նաև ուղղակիորեն առնչվում են ատենախոսությունում ներկայացված վերլուծության ու ուսումնասիրության առարկա որոշ հանգամանքներին:

5. Ատենախոսը 94-րդ էջում հեղինակը ներկայացնում է հանցագործությունից կամովին հրաժարվելու և գործուն զղջալու սահմանազատման անհրաժեշտությունը, սակայն մեկնաբանությունները մասնակի են ու մակերեսային:

Հետևություն. Սևակ Արթուրի Պողոսյանի ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները ներկայացնող համակարգված և ինքնուրույն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ. 00-05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Սևակ Արթուրի Պողոսյանի՝ «Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները» թեմայով ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ ոստիկանության փոխգնդապետ Հ.Մ.Խաչատրյանի կողմից: Քննարկվել և հավանության է արժանացել քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի 2021թ. հոկտեմբերի 26-ի նիստում, արձանագրություն № 5:

Ամբիոնի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ոստիկանության փոխգնդապետ Հ.Խաչատրյան

Հ.Խաչատրյանի ստորագրությունը հավաստում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
Տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ Գ.Գ.Մալխասյան